ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 24.10.2024թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությունն ընդունելով Ձեր առաջարկությունը, պատրաստակամ է համագործակցելու Հայաստանի Հանրապետությունում գործող ԲՈՒՀ-երի հետ: Միաժամանակ կարևորելով ուսումնառության ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման և զարգացման գործընթացը, քաղաքապետարանը տարբեր ուսումնական հաստատություններից արդեն իսկ պարբերաբար ընդունում է ուսանողների՝ համապատասխան վարչություններում, Երևանի վարչական շրջաններում, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կազմակերպություններում նրանց արտադրական պրակտիկան անցկացնելու նպատակով՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս ձևավորելու և զարգացնելու գործնական հմտություններն ու կարողությունները:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ուսումնական պրակտիկաների կազմակերպման և անցկացման նպատակով մի շարք ԲՈՒՀ-երի հետ վերսկսվել են հուշագրերի կնքման գործընթացը, ինչը կրում է շարունակական բնույթ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ